

**«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»**  
**բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն)**  
**տնօրենների խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ)**  
**ՈՐՈՇՈՒՄ թիվ 12**

(Կազմված է «22» նոյեմբերի 2021 թ.-ին և բաղկացած է 3 (երեք) թերթից)

**անցկացման վայր՝** ՀՀ, ք. Չարենցավան, Երևանյան 2  
**անցկացման տարի, ամիս, ամսաթիվ՝** 2021 թվականի նոյեմբերի 22  
**ժողովի սկիզբ՝** ժամը 11:00

Խորհրդի նիստին ներկա էին՝

- 1) Խաչատուր Անտոնյանը՝ խորհրդի անդամ
- 2) Վազգեն Նիկոլյանը՝ խորհրդի անդամ
- 3) Դավիթ Յավրույանը՝ խորհրդի անդամ

**ՀՀ օրենսդրությամբ և «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲ ընկերության կանոնադրության համաձայն՝ քվորումն ապահովված էր, խորհրդի նիստն իրավասու էր:**

Սույն որոշման կայացմանը խորհրդի նախագահ Միխայիլ Հարությունյանը չի մասնակցել, քանի որ սույն որոշման հիման վրա կնքված գործարքներում առկա է վերջինիս շահագրգռվածությունը:

**ՕՐԱԿԱՐԳ՝**  
Ընկերության  
Զեկուցող՝ Խաչատուր Անտոնյան  
**ՔՆՆԱՐԿՎԵՑ՝**

Օրակագում ընդգրկված հարցեր

1. Ի ապահովումն «Արդշինբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Բանկ) և «Միկշին» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի հունիսի 11-ին կնքված թիվ ԲՎՊ21/23-47 վարկային պայմանագրով տրամադրված վարկի ապահովման միջոց Ընկերությանը պատկանող 2470075311370000 հաշվեհամարին առկա դրամական միջոցների նկատմամբ պահանջի իրավունքի՝ 15,000,000,000 ՀՀ դրամ գումարի չափով արգելադրման կիրառմամբ, գրավադրման գործարքին հավանություն տալու հարցը:
2. Ի ապահովումն Բանկի և «Միկշին» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի հունիսի 11-ին կնքված թիվ ԲՎՊ21/22-47 վարկային պայմանագրով տրամադրված վարկի ապահովման միջոց Ընկերությանը պատկանող 2470075311370010 հաշվին առկա դրամական միջոցների նկատմամբ պահանջի իրավունքը՝ 15,000,000 ԱՄՆ դոլար գումարի չափով՝ արգելադրման կիրառմամբ, գրավադրման գործարքին հավանություն տալու հարցը:
3. Բանկի, Ընկերության և «Միկշին» ՍՊԸ-ի միջև 11.08.2021թ-ին կնքված թիվ ԲԳՊ21/483-01 երրորդ անձի պահանջի իրավունքի և դրամական միջոցների գրավի պայմանագրում փոփոխություններ կատարելու գործարքին հավանություն տալու հարցը:



4. Բանկի, Ընկերության և «Միկշին» ՍՊԸ-ի միջև 11.08.2021թ-ին կնքված թիվ ՔԳՊ21/484-01 երրորդ անձի պահանջի իրավունքի և դրամական միջոցների գրավի պայմանագրում փոփոխություններ կատարելու գործարքին հավանություն տալու հարցը:

Հարցը դրվեց քվեարկության՝

Խաչատուր Անտոնյանը՝ խորհրդի անդամ	ԿՈՂՄ
Վազգեն Նիկոյանը՝ խորհրդի անդամ	ԿՈՂՄ
Դավիթ Յավրույանը՝ խորհրդի անդամ	ԿՈՂՄ
Ընդամենը՝ կողմ՝ 4, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, չի մասնակցել՝ 0	

### ՈՐՈՇՎԵՑ՝

- 1) Հավանություն տալ և հաստատել ի ապահովումն Բանկի և «Միկշին» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի հունիսի 11-ին կնքված թիվ ՔՎՊ21/23-47 վարկային պայմանագրով տրամադրված վարկի ապահովման միջոց Ընկերությանը պատկանող 2470075311370000 հաշվեհամարին առկա դրամական միջոցների նկատմամբ պահանջի իրավունքի՝ 15,000,000,000 ՀՀ դրամ գումարի չափով արգելադրման կիրառմամբ, կնքված գրավի գործարքին:
- 2) Հավանություն տալ և հաստատել ի ապահովումն Բանկի և «Միկշին» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի հունիսի 11-ին կնքված թիվ ՔՎՊ21/22-47 վարկային պայմանագրով տրամադրված վարկի ապահովման միջոց Ընկերությանը պատկանող 2470075311370010 հաշվին առկա դրամական միջոցների նկատմամբ պահանջի իրավունքը՝ 15,000,000 ԱՄՆ դոլար գումարի չափով՝ արգելադրման կիրառմամբ, կնքված գրավի գործարքին:
- 3) Հավանություն տալ և հաստատել ի ապահովումն Բանկի և «Միկշին» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի հունիսի 11-ին կնքված թիվ ՔՎՊ21/22-47 վարկային պայմանագրի պայմանների փոփոխությամբ (այն է՝ վարկի մարման ժամկետը սահմանվել է մինչև 30.12.2021թ. ներառյալ) պայմանավորված նշված պայմանագրից բխող պարտավորությունների կատարման ապահովման միջոց հանդիսացող Բանկի, Ընկերության և «Միկշին» ՍՊԸ-ի միջև 11.08.2021թ-ին կնքված թիվ ՔԳՊ21/483-01 երրորդ անձի պահանջի իրավունքի և դրամական միջոցների գրավի պայմանագրում փոփոխություններ կատարելու գործարքին:
- 4) Հավանություն տալ և հաստատել ի ապահովումն Բանկի և «Միկշին» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի հունիսի 11-ին կնքված թիվ ՔՎՊ21/23-47 վարկային պայմանագրի պայմանների փոփոխությամբ (այն է՝ վարկի մարման ժամկետը սահմանվել է մինչև 30.12.2021թ. ներառյալ) պայմանավորված նշված պայմանագրից բխող պարտավորությունների կատարման ապահովման միջոց հանդիսացող Բանկի, Ընկերության և «Միկշին» ՍՊԸ-ի միջև 11.08.2021թ-ին կնքված թիվ ՔԳՊ21/484-01 երրորդ անձի պահանջի իրավունքի և դրամական միջոցների գրավի պայմանագրում փոփոխություններ կատարելու գործարքին:
- 5) Համաձայնություն տալ Ընկերության անունից կնքված և կնքվելիք պայմանագրերից և/կամ համաձայնագրերից բխող վեճերի դեպքում՝ վեճերի լուծումը հանձնել Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության դատարաններին,



- «Օպտիմուս Լեքս» ՍՊԸ-ում մշտապես գործող արբիտրաժային դատարանին, Հայաստանի Բանկերի Միության «Ֆինանսական արբիտրաժ» դատարանին կամ «Կրեդիտ Կոմպրոմիս» ՓԲԸ-ում մշտապես գործող արբիտրաժային դատարանին՝ Ընկերության անունից պայմանագրերը և համաձայնագրերը կնքող անձի ընտրությամբ:
- 6) Համաձայնություն տալ սույն որոշման հիման վրա կնքվելիք պայմանագրերը և համաձայնագրերը կնքել Բանկի կողմից առաջարկվող, Ընկերության անունից պայմանագրերը և համաձայնագրերը կնքող անձի համար ընդունելի ցանկացած պայմանով:
  - 7) Հանձնարարել Ընկերության տնօրեն Խաչատուր Անտոնյանին՝ սահմանված կարգով իրականացնել սույն որոշմամբ սահմանված գործարքների կնքման և ձևակերպման համար անհրաժեշտ գործողությունները:
  - 8) Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Խաչատուր Անտոնյանը՝ խորհրդի անդամ  
Վազգեն Նիկոլյանը՝ խորհրդի անդամ  
Դավիթ Յավրոյանը՝ խորհրդի անդամ

